

հոմանիզ ἀναδείξειν (ցուցանել) եւ ἀποφάινειν (յայտնել) բառերուն:

Թէ պիտի կարենայ այսու գոհ ընել նիւթին հմուտները, չենք գիտեր: Այսու հանդերձ խնամքով, ընտիր յօրինուածով գրուած եւ տարիներու աշխատութիւն մըն է Գոկտ. Հէօլէրի այս գիրքը, ուր դժուարութեան բուն երակններուն կը մերձենայ բանասիրութիւնը, բայց Հեղինակն անձամբ կը խոստովանի՝ թէ տակաւին վերջնականը չէ իւր խօսքը, անոր համար, պիտի ըսենք, դժուարութիւնը կը մնայ դժուարութիւն Տէրունական խօսքերուն եւ Կոչման աղօթքին հին եւ նոր պատճառներն իրարու հետ հաշտեցնելու:

Հ. Ս. ԵՂՊԱՅԵԱՆ



### Ա Յ Ի Ե Ի Ա Յ Ի Բ

“Յիշատակարան, Հայ տպագրութեան 400 ամեակի ամօթի: — Գ. Զարդարեանի Հայ տպագրութեան 400 ամեակին ամօթի (1512—1912) կազմուելիք գործքը հսկայաքալ կը յառաջագիժէ. նախընթաց 27 պրակներուն յաջորդած է արդէն 28-ը. որ ըլլա տեսաւ մաքուր տպագրութեամբ: Կերկայ պրակին նիւթն է. Յակոբ Արժապետ կարինեանց (1863), Յակոբս Պատրիարք Սերոյբեան (1780—1862), Աստուածատուր Աբբեպ. Բարիկեան (1738—1825), Տիկին Կատարինէ Լազարեանց (1805—1881), Յակոբ Մինաս Սըրբնովիչ († 1683), Մօսէս Խան Թոփչի Պաշի († 1820), Պօղոս Պատրիարք Գրիգորեան:

Անշուշտ Մեծ. Հեղինակին ծրագրին համաձայն, գործքս արդէն աւարտած պիտի ըլլայ, մինչեւ յորելեանի տօնախմբութեան որոշեալ օրը:

Յիշողական սուգիւ գրանչելի գործք մը, ուր նկարուած պիտի գտնենք Հայ կեանքն իւր իսկական գոյններով, շարան շարան մեր առջեւ ներկայացընելով պատկերազարդ երեւելի անձնաւորութեանց շարժապատկեր մը (cinématographie), որ սակայն ոչ թէ միայն վայրկենատիպ ազդեցութիւն մը պիտի թողու ընթերցողաց վրայ, այլ միեւնոյն ժամանակ մէյ մէկ մնայուն վաւերաթղթեր ապագայ պատմութեան համար: Հարկ է խոստովանիլ, որ այսպիսի կարեւոր եւ միաժամանակ տաժանելի գործք մը ի կատար հանելու համար՝ եռանդուն ու անխնջ աշխա-

տողի մը անվհատ ջանքերու կը կարօտէր. եւ ինչպէս կը տեսնուի, Մեծ. Հեղինակն ամէն ճիգ յանձն առած է, աւելի ճոխ ու կատարեալ կազմել կարենալու համար իւր հրատարակութիւնը. ամենայն իրաւամբ կրնանք ըսել. “արժանի է մշակն վարձու իւրոյ”:

Գ. Զարդարեանի այս գործքը, թող գործնական օրինակ մը ըլլայ այն ամենուն, որոնք թէ եւ շատ ու մեծամեծ խոստումներ կ'ընեն, սակայն դժբախտաբար արտագրութիւնը քիչ կամ ոչինչ կ'ըլլայ ինչպէս որ հասարակօրէն կ'ըսուի. Chi molte cose incomincia, viene a capo di poche: Ինչ գեղեցիկ կ'ըլլար եթէ Հայ տպագրութեան նուիրուելիք բոլոր գործերն ալ այսպիսի ըլլային: Կը յուսանք թէ “Յիշատակարանը”, դրդիչ պիտի ըլլայ 400 ամեակիս ամօթի կազմուելիք գէթ գրական “Ֆօնդ”ի մը գաղափարին եւ թէ՛ ինչ լաւագոյն նպատակի կրնայ գործածուիլ այս “Ֆօնդը”: Ազգին անցեալը եւ դարէ ի դար հայութեան օգին, անոր ընդունի մշտնջենաւորութիւնը, սովորութեանց պահպանումը, գեղարուեստական գիտութեանց յառաջացումը, գրական յիշատակարանով մը յաւերժացնել, ահա գործնական առաջարկութիւն մը, որ կը համարինք, թէ կ'արժանանայ Հայ գրագէտներու եւ Մեկենասներու ուշագրութեան:

Հ. Յ. ՏԵՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ



### Ս Ա Յ Ե Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

#### Ը Ն Պ Հ Ա Ն Ո Ւ Ի Բ Յ Ա Ն Կ

“ՀԱՆԳԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ” ՈՒՈՒԻՄՆԱԹԵՐԹԻ

25 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

(1887—1911)

#### Ց Ա Ն Կ Ա.

Յօդուածագիրներն եւ իրենց յօդուածները:

(Շ - - - - - Ի - - - - - Է - - - - - Է)

ՄԵՏԱԹԵԱՆ Ե. Գիտողութիւն մը (Ֆելիքս Կեփե L'Arménie chrétienneի մասին). ւ 72, է 105:

- Զենոր Գլակ եւ Մ. Խորենացի. դ 4:
- Ղաղար Փարպեցու պատմութեան յառաջաբանը. ւ 166:
- ԲՆ. Ընկեր իմ, Վիշա. գ 119: